ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է...

Հարգելի՛ քաղաքացիներ

Վերջին ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ հայտնաբերվում են **«հուշանվերային թղթադրամներ»**, որոնք իրենց չափերով, դիմերեսի և դարձերեսի արտաքին պատկերներով նմանակում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված նոր սերնդի թղթադրամները: Նշված **«հուշանվերային թղթադրամների»** դիմերեսին մանր տառաշարով առկա է «THIS NOTE IS NOT A LEGAL TENDER», իսկ դարձերեսին՝ «SOUVENIR MONEY OF ARMENIA» գրառումը:

Նշված «հուշանվերային թղթադրամները» օրինական վճարամիջոց չեն հանդիսանում և դրանցով վճարում կատարելու յուրաքանչյուր փորձ օրենքով սահմանված կարգով պատժելի է:

Ավելին՝ նշված «հուշանվերային թղթադրամները» պատրաստված են ՀՀ օրենսդրության խախտումներով:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի 45-րդ հոդվածի՝

«Գովազդի կամ այլ նպատակներով Հայաստանի Հանրապետության թղթադրամի պատկերը թղթի վրա արտապատկերված ձևով օգտագործելու դեպքում օգտագործվող պատկերի գծային չափերը (լայնությունը և երկարությունը) **պետք է փոքր կամ մեծ լինեն դրա՝ Կենտրոնական բանկի սահմանած իրական չափերից առնվազն 25 տոկոսով**:

Նշված նպատակներով և չափերով Հայաստանի Հանրապետության թղթադրամի դիմերեսի և դարձերեսի պատկերները **թույլատրվում է միաժամանակ օգտագործել միայն թղթի մեկ կողմում**»:

Ինչպես երևում է ներքոնշյալ լուսանկարներից, ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների դիմերեսի նույն հատվածում որևէ գրառում չկա, իսկ դարձերեսին առկա է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» գրառումը:

Դիմերեսի «THIS NOTE IS NOT A LEGAL TENDER» և դարձերեսի «SOUVENIR MONEY OF ARMENIA» գրառումներն արդեն իսկ վկայում են այն մասին, որ այդ **«հուշանվերային թղթադրամները»** չեն թողարկվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ուստի չեն կարող օգտագործվել որպես վճարամիջոց:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ

Հուշանվերային թղթադրամ (նմանակված թղթադրամ)

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ



Հուշանվերային թղթադրամ (նմանակված թղթադրամ)



Միաժամանակ նշենք, որ հուշանվերային թղթադրամների հորիզոնական և ուղղահայաց համարանիշները նույնպես տարբերվում են ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների համարանիշներից:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկած թղթադրամները պարունակում են հայատառ սերիա (երկու հայկական տառ) և **ութանիշ համար**, իսկ վերը նկարագրված **հուշանվերային թղթադրամները** պարունակում են լատինատառ սերիա և **տասանիշ համար**:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ

Հուշանվերային թղթադրամ (նմանակված թղթադրամ)

Նշված **հուշանվերային թղթադրամների** դիմերեսի և դարձերեսի պատկերները **չփոթության աստիճանի նմանակում են** ՀՀ կենտրոնական բանկի 2018 թ. թողարկման թղթադրամների դիմերեսի և դարձերեսի պատկերները և չեն պարունակում որևէ պաշտպանական հատկանիշ:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՍՏՈՒԳԵԼ ԹՂԹԱԴՐԱՄԻ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ...

ՀՀ թղթադրամներն ունեն մի շարք պաշտպանական հատկանիշներ, սակայն կասկածելի թղթադրամի ստուգման համար քաղաքացիները պետք է հատկապես ուշադրություն դարձնեն թղթադրամի հետևյալ պաշտպանական հատկանիշներին.

1. Դիմերեսի շոշափելի պատկերներ

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների դիմերեսի որոշ պատկերներ ունեն բարձր մակերես, և շոշափելիս զգացվում է թղթի անհարթություն (դիմանկարը, թղթադրամի անվանական արժեքն արտահայտող թվանշաններն ու բառերը...), ինչը պայմանավորված է տպագրության հատուկ տեխնոլոգիաներով:

Հուշանվերային թղթադրամների դիմերեսը շոշափելիս որևէ անհարթություն չի զգացվում:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ

2. **Օպտիկապես փոփոխական ներկ՝** տեղադրված թղթադրամների դիմերեսի ստորին ձախակողմյան անկյունում՝ շրջանակի տեսքով:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների նշված հատվածում լույսի անկման անկյունը փոխելիս տեղի է ունենում հորիզոնական փայլուն գծի տեղաշարժ, և շրջանակը փոխում է գույնը կանաչից կապույտի:

Հուշանվերային թղթադրամների նշված հատվածում փայլի տեղափոխում կամ գույնի փոփոխություն տեղի չի ունենում:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ

3. **Պաշտպանական ներգիծ՝** տեղակայված թղթադրամի դիմերեսի կենտրոնից աջ ընկած հատվածում՝ թղթադրամի վերևից ներքև:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների վրա պատուհանաձև պաշտպանական ներգիծն ունի գունափոխման հատկանիշ, պարունակում է «լողացող» 3D պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկեր և անվանական արժեք արտահայտող թիվ պարունակող գրառում:

Հուշանվերային թղթադրամների վրա նշված հատկանիշները բացակայում են:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ

4. **Թափանցիկ պատուհան՝** տեղակայված թղթադրամի աջակողմյան վերին հատվածում:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների դեպքում պատուհանը թափանցիկ է՝ թաղանթապատ:

Հուշանվերային թղթադրամների դեպքում նշված էլեմենտը թափանցիկ չէ, տպագրված է դիմերեսին և դարձերեսին:

ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամ



ՀՀ կենտրոնական բանկի թողարկման թղթադրամների պաշտպանական հատկանիշներին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ cba.am կայքի «Թղթադրամեր և մետաղադրամներ» բաժնում, ինչպես նաև Arm.Dram 3.0 մոբայլ հավելվածում (App store և Play market):

ՀԱՐԳԵԼԻ՛ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ, ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ...

ՀՀ կենտրոնական բանկը ևս մեկ անգամ տեղեկացնում է, որ **թղթադրամների նմանակումների** պատրաստումը և դրանք շրջանառության մեջ օգտագործելն **առաջացնում է ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվություն:**

Հայաստանի Հանրապետության օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամների տպագրությունը, շրջանառությունը և դրա հետ կապված ցանկացած գործընթաց կարգավորված և պաշտպանված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ գործող օրենսդրությամբ: Ցանկացած ապօրինություն դրամաշրջանառության ոլորտում հայտնաբերվելու և պատժվելու է օրենքի ամբողջ խստությամբ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը լինելու է հետևողական և խստապահանջ:

ՀՀ կենտրոնական բանկը կոչ է անում ուշադրություն դարձնել թղթադրամների պաշտպանական հատկանիշներին և զերծ մնալ նմանատիպ «հուշանվերային թղթադրամներով» որևէ գործարք կատարելուց, քանի որ դրա հետևանքով պատճառված և առաջացած գույքային և նյութական վնասների համար Կենտրոնական բանկը պատասխանատու չի լինելու:

ՀՀ կենտրոնական բանկ